

Տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառության կարգը հաստատելու մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

«___» _____ 2019թ.

թիվ ____ Ն

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 368-րդ
հոդվածի 7-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը որոշում է.

1. Սահմանել տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառության
կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված ՀՀ կառավարության 2019 թվականի ----- --ի թիվ -----Ն
որոշման

ԿԱՐԳ

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են տրանսֆերային գնագոյացման

մեթոդների կիրառության ընդհանուր սկզբունքները և առանձնահատկությունները:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված իմաստն ու նշանակությունը:
3. Վերահսկվող գործարքում կիրառված ֆինանսական ցուցանիշի պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև այդ գործարքի մասով շահութահարկով հարկման բազան, ԱԱՀ-ով հարկման բազան և (կամ) ռոյալթիի բազան որոշելու նպատակով կիրառվում են տրանսֆերային գնագոյացման հետևյալ մեթոդները (այսուհետ՝ մեթոդներ)՝
 - համադրելի չվերահսկվող գնի մեթոդը,
 - վերավաճառքի գնի մեթոդը,
 - ծախսումներ գումարած մեթոդը,
 - զուտ շահույթի մեթոդը,
 - շահույթի բաշխման մեթոդը:
4. Մեթոդների կիրառումը պարտադիր է միայն Օրենսգրքի 363-րդ հոդվածով սահմանված վերահսկվող գործարքների համար:
5. Համակցված վերահսկվող գործարքների գնահատումը կատարվում է Օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն:
6. Վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու համար հարկ վճարողի կողմից տրանսֆերային գնագոյացման մեկից ավելի մեթոդների կիրառությունը պարտադիր չէ: Երկու և ավելի մեթոդների կիրառումը կարող է նպատակահարմար լինել այն դեպքում, երբ այն կհանգեցնի վերլուծության ենթակա վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության արժանահավատության բարձրացմանը:
7. Տրանսֆերային գնագոյացման առավել համապատասխան մեթոդ է համարվում այն մեթոդը, որն ընտրվել է Օրենսգրքի 368-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի դրույթների համաձայն:
8. Եթե հարկ վճարողը վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու նպատակով կիրառել է մեթոդներից որևէ մեկը (կամ մեկից ավելի), ապա հարկային մարմնի կողմից հարկ վճարողի վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության պարզումը հիմնվում է հարկ վճարողի կիրառած տրանսֆերային գնագոյացման մեթոդի (մեթոդների) վրա, եթե հարկ վճարողի կիրառած տրանսֆերային գնագոյացման մեթոդի (մեթոդների) ընտրությունը կատարվել է Օրենսգրքի 368-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:
9. Մեթոդների կիրառման համար կարող են օգտագործվել ներքին և արտաքին չվերահսկվող գործարքները, դրանց համակցությունը, ինչպես նաև Օրենսգրքի 367-րդ հոդվածով սահմանված տեղեկատվության այլ աղբյուրներ: Ընդ որում, հավասար արժանահավատության դեպքում պետք է օգտագործել ներքին չվերահսկվող գործարքները:

10. Մեթոդների կիրառման համար թույլատրելի չէ Օրենսգրքի 4-րդ հոդվածի 63-րդ մասի համաձայն հարկային գաղտնիք համարվող տեղեկատվության օգտագործումը, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության օգտագործումը, որի հասանելիությունը սահմանափակված է Հայաստանի Հանրապետության կամ որևէ օտարերկրյա պետության օրենսդրությամբ:
11. Մեթոդի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնվեն տեղեկատվության լիարժեքությունն ու հավաստիությունը, ինչպես նաև համադրելիության ճշգրտումների անցկացման հնարավորությունն ու հիմնավորումը:
12. Համադրելի չվերահսկվող գնի մեթոդը կարող է կիրառվել ցանկացած վերահսկվող գործարքի նկատմամբ, բացառությամբ համակցված վերահսկվող գործարքների: Օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 2)-5)-րդ կետերում նշված մեթոդները յուրաքանչյուր վերահսկվող գործարքի նկատմամբ առանձին կիրառելու անհնարինության դեպքում կիրառվում են համակցված վերահսկվող գործարքների նկատմամբ:
13. Օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 2)-5)-րդ կետերում նշված մեթոդները կարող են կիրառվել առանց պարզաձև ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխան գործարքի գնի հաշվարկի:
14. Ֆինանսական ցուցանիշները, որոնց հաշվարկման համար հիմք են հանդիսանում ֆինանսական հաշվետվությունների տվյալները, անհրաժեշտության դեպքում դարձվում են համադրելի՝ ապահովելով եկամուտների և ծախսերի հաշվարկի ժամանակ առկա տարբերությունների ոչ էական ազդեցությունը ֆինանսական ցուցանիշների վրա: Մասնավորապես նշված տարբերությունները կարող են ի հայտ գալ այնպիսի իրավիճակում, երբ ֆինանսական ցուցանիշների հաշվարկի համար օգտագործվող ֆինանսական հաշվետվությունների կազմման կանոնները տարբերվում են ըստ տարբեր ստանդարտների կամ ըստ տարբեր երկրների օրենսդրությունների: Ֆինանսական հաշվետվության տվյալների համաձայն ֆինանսական ցուցանիշների հաշվարկման ժամանակ օգտագործվում է այն տեղեկատվությունը, որը հասանելի է եղել վերահսկվող գործարքի իրականացման պահին: Այն դեպքերում, երբ չվերահսկվող գործարքի՝ վերահսկվող գործարքի հետ համադրելիությունը գնահատելիս վերահսկվող գործարքի իրականացման հարկային տարվա վերաբերյալ տեղեկատվությունը դեռևս հայտնի չէ, ապա կարող է օգտագործվել՝
 - վերահսկվող գործարքի կատարմանը նախորդող հարկային տարվա տեղեկատվությունը, կամ
 - վերահսկվող գործարքի կատարմանը նախորդող ոչ ավելի, քան 3 հարկային տարիներին վերաբերող տեղեկատվությունը, եթե դրանք բացահայտում են այնպիսի փաստեր, որոնք կարող են ազդել համեմատվող գործարքների համադրելիությունը որոշելու վրա:
15. Հարկային օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 2)-5)-րդ կետերում նշված մեթոդներից որևէ մեկի կիրառության նպատակով ընտրված ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա սահմանված ֆինանսական ցուցանիշները դիտարկվում են որպես արտաքին համադրելի գործարքների հիման վրա ձևավորված

ֆինանսական ցուցանիշներ:

2. Համադրելի չվերահսկվող գնի մեթոդ

16. Համադրելի չվերահսկվող գնի մեթոդը վերահսկվող գործարքի առարկայի գնի համեմատումն է չվերահսկվող համադրելի գործարքի առարկայի գնի հետ՝ որոշելու վերահսկվող գործարքի գնի համապատասխանությունը պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին:
17. Այս մեթոդի կիրառության դեպքում գործարքի առարկայի բնութագրին՝ համադրելիության գործոնին, տրվում է առավել կարևորություն, քանի որ այս մեթոդի կիրառությունը ենթադրում է անմիջապես գործարքի առարկայի համեմատություն, ի տարբերություն այլ մեթոդների, որտեղ վերլուծվում են շահույթի կամ հասույթի տարբեր գործակիցներ:
18. Օրենսգրքի 368-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համադրելի չվերահսկվող գնի մեթոդն ունի կիրառման առաջնահերթություն Օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին մասի 2)-5)-րդ կետերում սահմանված մեթոդների նկատմամբ:
19. Համադրելի չվերահսկվող գնի մեթոդի կիրառության ժամանակ վերլուծության ենթակա կողմի ընտրություն չի պահանջվում, քանի որ այս մեթոդի դեպքում վերլուծության ենթակա ֆինանսական ցուցանիշը՝ գինը, համաձայնեցված է երկու փոխկապակցված չհամարվող հարկ վճարողների միջև:
20. Համադրելի չվերահսկվող գնի մեթոդը կիրառվում է առնվազն մեկ համադրելի գործարքի վերաբերյալ արժանահավատ և հուսալի տեղեկատվության առկայության դեպքում:
21. Միայն մեկ համադրելի գործարքի մասին տեղեկատվության առկայության դեպքում այդպիսի գործարքի գինը կարող է միևնույն ժամանակ ճանաչվել պարզած ձեռքի հեռավորության տիրույթի նվազագույն և առավելագույն արժեք, միայն այն դեպքում, երբ վերլուծվող վերահսկվող գործարքի և համադրելի գործարքի նկատմամբ ամբողջությամբ իրականացվում են գործարքների համադրելիության կիրառվող բոլոր պայմանները, կամ համապատասխան համադրելիության ճշգրտումների միջոցով ապահովվել է գործարքների լիարժեք համադրելիությունը:
22. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքի առարկան համադրելի չէ չվերահսկվող գործարքի առարկայի հետ և բավարար համադրելիության ապահովման համար համադրելիության որևէ ճշգրտումներ չեն կարող կիրառվել Օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ապա համադրելի չվերահսկվող գնի մեթոդի կիրառման փոխարեն պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին՝ վերլուծվող վերահսկվող գործարքի համապատասխանության պարզման համար առավել նպատակահարմար է կիրառել Օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին մասի 2)-5)-րդ կետերում սահմանված

Մեթոդներից մեկը:

23. Համադրելի չվերահսկվող գնի մեթոդի կիրառության համար պետք է կիրառվեն այն համադրելի գործարքների գները, որոնք կատարվել են վերլուծվող վերահսկվող գործարքի իրականացման հարկային տարում, եթե Օրենսգրքի 370-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ:
24. Մեկից ավելի համադրելի գործարքների մասին տեղեկատվության առկայության դեպքում պարզաձև ձևերի հեռավորության տիրույթը սահմանվում է Օրենսգրքի 371-րդ հոդվածով սահմանված կարգով:
25. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում կիրառված գինը գտնվում է պարզաձև ձևերի հեռավորության տիրույթում, հաշվի առնելով համադրելիության ճշգրտումները, եթե դրանք կիրառելի են, ապա հարկման նպատակով ընդունվում է, որ վերլուծվող վերահսկվող գործարքի գինը համապատասխանում է պարզաձև ձևերի հեռավորության սկզբունքին՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:
26. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում կիրառվող գինը գտնվում է պարզաձև ձևերի հեռավորության տիրույթից դուրս, հաշվի առնելով համադրելիության ճշգրտումները, եթե դրանք կիրառելի են, ապա այդպիսի վերահսկվող գործարքի գինը չի համապատասխանում պարզաձև ձևերի հեռավորության սկզբունքին: Հարկային մարմինը շահութահարկի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար կամ հարկային վնասի ցանկացած նվազեցում, ավելացված արժեքի հարկի կամ ռոյալթիի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար առաջանալու դեպքում կարող է ճշգրտել վերլուծվող վերահսկվող գործարքի գինը՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն:
- Հարկային մարմինը շահութահարկի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար կամ հարկային վնասի ցանկացած նվազեցում, ավելացված արժեքի հարկի կամ ռոյալթիի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար առաջանալու դեպքում կարող է ճշգրտել վերահսկվող գործարքի գինը՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն:

Գլուխ 3. Վերավաճառքի գնի մեթոդ

27. Վերավաճառքի գնի մեթոդը վերլուծվող վերահսկվող գործարքի՝ պարզաձև ձևերի հեռավորության սկզբունքին համապատասխանության որոշման մեթոդ է, որն իրականացվում է վերահսկվող գործարքի առարկայի վերավաճառքից ստացված հավելագինը համադրելի չվերահսկվող գործարքի առարկայի վերավաճառքից ստացված հավելագնի հետ համեմատելու միջոցով:

28. Վերավաճառքի գնի մեթոդի կիրառման դեպքում որպես հավելագին է դիտարկվում վաճառքների համախառն շահութաբերությունը, որը սահմանվում է որպես համախառն շահույթի և հասույթի

հարաբերություն (առանց ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և բնապահպանական հարկի):

29. Վերավաճառքի գնի մեթոդը կիրառվում է, երբ վերավաճառողը վերահսկվող գործարքում ձեռք բերված առարկայի վերավաճառքի դեպքում որևէ էական հավելյալ արժեք չի ավելացրել վերավաճառվող ապրանքի վրա:
30. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում վերավաճառք իրականացնողի կիրառած հավելագինը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթում, հաշվի առնելով համադրելիության ճշգրտումները, եթե դրանք կիրառելի են, ապա հարկման նպատակներով ընդունվում է, որ այդպիսի վերահսկվող գործարքի հավելագինը համապատասխանում է պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին՝ համաձայն Օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ կետի:
31. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում կիրառվող հավելագինը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, հաշվի առնելով համադրելիության ճշգրտումները, եթե դրանք կիրառելի են, ապա այդպիսի վերահսկվող գործարքի հավելագինը չի համապատասխանում պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին:
Այդ դեպքում հՀ արկային մարմինը շահութահարկի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար կամ հարկային վնասի ցանկացած նվազեցում, ավելացված արժեքի հարկի կամ ռոյալթիի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար առաջանալու դեպքում կարող է ճշգրտել վերահսկվող գործարքում կիրառվող հավելագինը՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն:

Գլուխ 4. «Ծախսումներ գումարած» մեթոդ

32. «Ծախսումներ գումարած» մեթոդը վերլուծվող վերահսկվող գործարքի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության որոշման մեթոդ է, որն իրականացվում է վերահսկվող գործարքի առարկայի մատակարարման ընթացքում կատարված ուղղակի և անուղղակի ծախսերի նկատմամբ կիրառված հավելագինը համադրելի չվերահսկվող գործարքի առարկայի մատակարարման ընթացքում կատարված ուղղակի և անուղղակի ծախսերի նկատմամբ կիրառված հավելագնի հետ համեմատելու միջոցով:
33. «Ծախսումներ գումարած» մեթոդի կիրառման դեպքում որպես հավելագին է դիտարկվում ծախսերի համախառն շահութաբերությունը, որը սահմանվում է որպես համախառն շահույթի ու գործարքի առարկային վերաբերող ուղղակի և անուղղակի ծախսումների գումարի հարաբերություն:
34. «Ծախսումներ գումարած» մեթոդը կիրառվում է երբ վերավաճառողը չի օգտագործում էական ոչ նյութական ակտիվներ և (կամ) կրում էական ռիսկեր:
35. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքի հավելագինը գտնվում է

պարզած ձեռքի հեռավորության տիրույթում, հաշվի առնելով համադրելիության ճշգրտումները, եթե դրանք կիրառելի են, ապա հարկման նպատակով ընդունվում է, որ այդպիսի վերահսկվող գործարքում կիրառած հավելագինը համապատասխանում է պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:

36. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում կիրառվող հավելագինը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, հաշվի առնելով համադրելիության ճշգրտումները, եթե դրանք կիրառելի են, ապա այդպիսի վերահսկվող գործարքի հավելագինը չի համապատասխանում պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին: – Հարկային մարմինը շահութահարկի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար կամ հարկային վնասի ցանկացած նվազեցում, ավելացված արժեքի հարկի կամ ռոյալթիի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար առաջանալու դեպքում կարող է ճշգրտել վերահսկվող գործարքում կիրառվող հավելագինը՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն:

Գլուխ 5. Չուտ շահույթի մեթոդ

37. Չուտ շահույթի մեթոդը վերլուծվող վերահսկվող գործարքի ֆինանսական ցուցանիշի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության որոշման մեթոդ է, որն իրականացվում է վերահսկվող գործարքի արդյունքում առաջացած համապատասխան բազայի, մասնավորապես, ծախսումների, իրացումների, ակտիվների նկատմամբ ստացված զուտ շահույթը համադրելի չվերահսկվող գործարքի արդյունքում առաջացած միևնույն բազայի նկատմամբ ստացված զուտ շահույթի հետ համեմատելու միջոցով:
38. Չուտ շահույթի մեթոդի կիրառման ժամանակ վերահսկվող գործարքի համապատասխան բազայի ընտրությունն իրականացվում է Օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 4)-րդ կետերի դրույթների համաձայն:
39. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքում վերլուծության ենթակա կողմի ֆինանսական ցուցանիշը գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթում, հաշվի առնելով համադրելիության ճշգրտումները, եթե դրանք կիրառելի են, ապա հարկման նպատակներով ընդունվում է, որ այդպիսի վերահսկվող գործարքի ֆինանսական ցուցանիշը համապատասխանում է պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին:
40. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքի կողմերից յուրաքանչյուրի ստացած շահույթը (վնասը) գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, հաշվի առնելով համադրելիության ճշգրտումները, եթե դրանք կիրառելի են, ապա այդպիսի վերահսկվող գործարքի համար կիրառելի է այն շահույթը (վնասը), որը համապատասխանում է պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին: Հարկային մարմինը

շահութահարկի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար կամ հարկային վնասի ցանկացած նվազեցում, ավելացված արժեքի հարկի կամ ռոյալթիի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար առաջանալու դեպքում կարող է ճշգրտել վերահսկվող գործարքի կողմերից յուրաքանչյուրի ստացած շահույթը (վնասը)՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն:

Գլուխ 6. Շահույթի բաշխման մեթոդ

41. Շահույթի բաշխման մեթոդը վերլուծվող վերահսկվող գործարքի ֆինանսական ցուցանիշի՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանության որոշման մեթոդ է, որն իրականացվում է վերահսկվող գործարքին մասնակցող փոխկապակցված հարկ վճարողներից յուրաքանչյուրին տվյալ գործարքից ստացված շահույթի կամ վնասի այն մասնաբաժինը հատկացնելու միջոցով, որը փոխկապակցված չհամարվող անձը կարող էր ակնկալել համադրելի չվերահսկվող գործարքին մասնակցելիս: Սույն կետի կիրառության իմաստով՝ գործարքից ստացվող շահույթ է համարվում այդ գործարքի գծով ստացվող հասույթի և դրա գծով ծախսերի դրական տարբերությունը:
42. Շահույթի բաշխման մեթոդի կիրառման նպատակով վերլուծվող վերահսկվող գործարքի կողմերի շահույթը (վնասը) ճանաչվում է վերլուծվող ժամանակահատվածում վերահսկվող գործարքի համախառն հասույթի և ծախսերի տարբերությունը:
43. Շահույթի բաշխման մեթոդը, մասնավորապես, կարող է կիրառվել հետևյալ դեպքերում.
 - վերահսկվող գործարքի շրջանակներում վերահսկվող գործարքի կողմերի գործունեության էական փոխկապակցվածության առկայության դեպքում,
 - եթե հնարավոր չէ վերլուծել վերահսկվող գործարքի կողմերից յուրաքանչյուրի գործունեությունն առանձին-առանձին,
 - վերահսկվող գործարքի կողմերից ավելի քան մեկի կողմից վերլուծվող վերահսկվող գործարքի վրա այնպիսի ոչ նյութական ակտիվների օգտագործման դեպքում, որոնք շահույթի մակարդակի վրա էական ազդեցություն են թողնում:
44. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքի կողմերից յուրաքանչյուրի ստացած շահույթը (վնասը) գտնվում է շահույթի (վնասի) պարզած ձեռքի հեռավորության տիրույթում, որը շահույթի բաշխման մեթոդի համաձայն հաշվարկվել է վերլուծվող վերահսկվող գործարքի այդ կողմի համար, ապա հարկման նպատակով ընդունվում է, որ այդպիսի

վերահսկվող գործարքը համապատասխանում է պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին:

45. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքի կողմերից յուրաքանչյուրի ստացած շահույթը (վնասը) գտնվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթից դուրս, հաշվի առնելով համադրելիության ճշգրտումները, եթե դրանք կիրառելի են, ապա այդպիսի վերահսկվող գործարքի համար կիրառելի է այն շահույթը (վնասը), որը համապատասխանում է պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին: Հարկային մարմինը շահութահարկի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար կամ հարկային վնասի ցանկացած նվազեցում, ավելացված արժեքի հարկի կամ ռոյալթիի հարկման բազայի ցանկացած լրացուցիչ գումար առաջանալու դեպքում կարող է ճշգրտել վերահսկվող գործարքի կողմերից յուրաքանչյուրի ստացած շահույթը (վնասը)՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: